

**Պլոտինոս կամ «Լեննեադներ» երրորդ գիրքը ընդմիջարկված «Գլխամատիկ միջանցքով»**

Մեզ թերահավատ վերաբերվելու պատրվակը ոչ մի լուրջ պատճառից կառչելու կարիք չի ունենա, եթե փորձենք մեր կարծիքը չհանդուրժողին գույց տալ, թե այնքան էլ պարզմիտ չենք, որպեսզի անցյալի փիլիսոփայության մասին պատկերացում կազմենք՝ հիմք ընդունելով մեկ Սոկրատեսի, կամ մեկ Պլատոնի: Մեր համոզումների, հայացքների, դավանումների և նրանց վրա, ինչքան էլ բազաթիկ լինեն, այլոց ազդեցությունների միջև ամենատարակաճ համակրանքներն ու հակակրանքներն են: Սոկրատեսի և Պլատոնի հետ իր ժամանակում լինել և ճանաչել նրանց անմիջակաճորեն, այլ է, և միանգամայն այլ՝ ճանաչել նրանց ըստ տեքստի: Նրանց ավտորիտետը է, թե ոչ, այն որ՝ պետք է խոսենք Պլոտինոսի հայացքներից չարիքի գոյության շուրջ, արդեն անխոհեմություն է: Բայց ինչքան էլ ըստ տեքստի դատելով՝ իմ տեքստն է խոհեմությամբ նվազ, ինձ համարձակություն եմ ներշնչում այսպես՝ ինչ գրված է, այն գրված է: Եթե Պլոտինոսը ասում է՝ **լավ է արարածները խժոված լինեն մեկմեկուց, քան չլինեն ծնված** [«Լեննեադներ», 3, 2, 15], նա հիմք ունեմ՝ սա հասկանալու բառացի, առանց այլաբանության:

Մրանչելի տիպար Պլոտինոսից, թող ավելի ճշմարիտ խոսի նա, ով անձնապես է ճանաչել նրան: Պորփյորիոս: Եվս մեկ երկուսը: Եվ ուրիշ ոչ ոք: Չտատանվենք մեզ խոնարհամտություն ներշնչելու պատվի մեջ, որ կարող է ուսուցանելի լինել Պլոտինոսի «հակասումներում» ինձ տրամագծորեն հակառակ մտածողների համար: Եվ, միաժամանակ, կարենկցանք չառաջացնենք՝ նրա մասին բազում անգամ ասվածները մի ծեծված պարտավորությամբ վերապատմելով, ինչը կարող է ուսուցանելի լինել նրանց համար, ովքեր խնամքով «լրացնում» են՝ ե՞րբ է ծնվել Պլոտինոսը և ե՞րբ է մահացել՝ իրենց նվազ պատկերացումները փոխհատուցելու ձևը, ահա, այսպես հեշտորեն գտած: Պլոտինոսը, եթե հնար ունենար, կծնվեր աշխարհից թաքուն, կմեռեր աշխարհից թաքուն: **«Նրա համար այնպիսի տեսություն էր բնորոշ լինել նկարչին կամ քանդակագործին, որ մի անգամ, երբ Ամելիոսը նրան խնդրեց թույլ տալ իրեն նկարել, նա պատասխանեց. «Բավական չէ, արդյո՞ք, որ մենք ստիպված ենք մեզ հետ քարշ տալ այն մարմինը, որի մեջ բանտարկված ենք բնության կողմից, միթե՞ մենք պետք է թողնենք նաև բանտի պատկերը, ասես, նրա տևքը իր մեջ ունի որևէ վեհապանծ բան»**, [Պորփյորիոս, «Պլոտինոսի կյանքը», 1]:

Գիտակցությունը կայծ է սկզբնատարր Միակի պայծառացումից, որ «ծագում չունի, բայց որից ծագում են» [Ալբինոս]: Իր մեջ նույն պայծառացումը չբորբոքող նյութական գոյությունը, եթե այդ կայծը մեղքնում է, անգիտությունից է և չարիքի ակունք: Գիտակցության կայծը պետք է բռնկվի, որպեսզի համապայծառ լինի **Նրա հետ, որից ծագել է և որը ծագում չունի**: Չուրվել Նրան, որ ծագում չունի, այլ բան չէ, քան ազատագրվել նյութից և, հետևապես, ոչնչացումից, հասնել նյութավոր կեցության վախճանի՝ Բրահմա Նիրվանայի, որ պլոտինյան հասկացություններում համընկնում է ատարաբախյալին: Նախագույնի վերուստ ի վայր պայծառությամբ հեղումն, ինչքան որ վերլուծական հայտնությամբ է, նույնքան ներքևից դեպի Նախագույնը գիտակցության հառնումն է անմեկնելի:

Փախուստով աշխարհում տիրող չարիքը քեզ հետ չեն տանում: Մարդուն սիրել իր թշվառության մեջ մնալով մարդու հետ: Պետք է տալ չարիքի բացատրությունը:

Այն, որ չգոյից կարգադրվել է լինելը և բխումի ինքնաբերությունը, աստիճան առ աստիճան, միջհանգուցված-հանգավորված սփռվելու է ինքնըստինքյան սերմ պարունակող յուրաքանչյուր սեռի արարածների վրա, - լինելու հիացմունքը այդ նույն մղումի մոլեգնությամբ պիտի ավարտվեր: Ինչպես հաճույքը ավելանալով չի կարող գապել մոլության մեջ ընկնելու կիրքը: Մատերիան, որ արարվեց, այդ կիրքը մոլեգնումի մեջ էր, և հեռու էր նախասկզբնական հիացումի մաքրությունից:

Պլոտինոսի հիերարխիան անհունի կարգաբերումն է, որ անսահմանությունից եկող սրբազան կրավորականությունը, ինչպես էլ պահպաներ, մեղադրվելու էր մարմնավորը [ստորակարգը] արարելու մեջ: Արդարացման մի ճանապարհ կա: Մատերիան ոչ թե դուրս նետել հիերարխիայից, այլ ներառել ամբողջի ֆունկցիոնալության մեջ: Չարիքի գոյությունը նպատակավորված է:

Եռաբանության [Միակը-Բանակնությունը-Նոզին] ստորոտում [նյութի աշխարհում, որ բազմամարդացած հոգին է երկրի վրա] անկատարությունները կատարյալի անկատարներ են: Ամեն մի ստորև առնում է սկիզբ բարձրից, մի անհրաժեշտությունից, որը ակամա սկզբնավորվում է էլ ավելի բարձրակարգից, մի ուրիշ անհրաժեշտությունից, ստեղծելով անխուսափելի կարգ: Ակաման կամքն է: Նախախնամի կամք-անսխալականությունը, եթե հենոսիս-կարգի վրա հույս է դնում՝ հնարավոր սահունությամբ, առանց մեծ

աղետներ, Աստծո խնամության ներքո իրականացնելու համաշխարհային Օրենքը, -նա գնալով ստիպված է կորցնելու իր առաջին պարզությունը, պատմությունը կերտող մարդու հանդեպ Միակի մաքուր կարեկցությունը: Որքանով հենսուխ-կարգը իր ծավալման ընթացքում, չի բացառվում, որ կարող է տիրապետում ից սայթաքել, «խառնվածքի» որոշ մոլեկուլային դրսևորել: Եվ Միակի կարեկցանքը մնում է մարդու հանդեպ, արդեն «դաժան» կարեկցության տևարով: Եթե պատմությունը ընթանում է մեծագույն ողբերգություններով այդ «դաժանի» մեջ գույթ է թաքնված: Ամեն ինչ հանուն մարդու կատարելության է, այդ թվում նաև չարիքը. «... կենդանական ցածր ու մարդկային բարձր աշխարհները մոլեկուլում են անվերջանալի պատերազմներով, կռիվը անընդմեջ է ու ամենուրեք» [«Էնենադներ», 3, 2, 15]: Մարդ, եթե ուզում ես աստվածանալ, պետք դիմանաս պատերազմների այդ «գույթին», որ քնդ կատարելություն է խոստանում:

Համացույց աստիճանավորումն, որ Սուրբ կարգադրությամբ է և ընդգրկուն կեցությամբ, բարձրագույնից մինչև ստորադաս կենդանությունը, եթերային աննյութություններից մինչև նյութապես անմնացորդ պարունակվածը, Աստծուց մինչև անասուն, շարժուններից մինչև պարփակուն անփոփոխները, լիությունից մինչև դատարկություն, աստեղային վերամբարձությունից մինչև շոշափելի, որ մեր շուրջ է, - հատկացված են ինչքան Սուրբ կարգադրությամբ [ հիերարխիային ], նույնքան ծավալվելու համար «միջոցներ» միջև անխտրության: Այս հիմնաստիճաններում չկա միջոց, որ չարդարացնի նպատակը: Չարիքը այդ միջոցներից մեկն է: Մենք հարկադրված չէինք լինի և հակված նման եզրակացության, եթե աշխարհում միայն բարին լիներ: Կյանքը մեթոդ է, որով ամրապնդվում է հիերարխիան: Ինքնին ծավալվող Բազումը հումը է, որ այդ մեթոդը ծամում է նստած անդունդի եզրին: Հիերարխիաները անդունդներ են սթափեցնում իրենց վեր միտված հակապատկերով: Բայց նրանք սիրում են վիհը, ինչպես հոգեխախտությամբ տառապող մի հիվանդ սիրեր իր ախտերը:

Մետաֆիզիկայի հիմնաճեղքումը, երբ դրվեց չգոյի, ոչ թե գոյի խնդիր, ըստ էության, կեցության և գիտակցության նույնության հարցը, եթե մինչ այդ գոյից չգոյով էր առաջնորդվում, տեղաշարժեց չգոյից գոյ: Ինչ ու: Որովհետև նորագույն ժամանակներում մետաֆիզիկայում բացված անդնդի փյուզումը իր ճեղքումը հասցրեց մարդկային հոգուն: Մետաֆիզիկան ճեղքվեց, որովհետև [ Պլոտինոսի ] հիերարխիայի մեջ հոգին էր ճեղքվել:

Ուր էլ մեզ Նպատակը տանի սեփական պատճառաբանությամբ ու ինչքան էլ մենք հարմարված լինենք նրա նախասահմանածին, եթե չճեղքվի էլ անդունդների` փյուզման տագնապ ու անզորություն հարուցելով մեզ, մենք մեր անդունդը կունենանք մեր հոգու մեջ: Ու դա, ոչ թե հոգեպես այլասերման, աստվածանկումի մեր բնածին վաղեմությամբ փորված գույթ, այլ արիստոտելյան մետաֆիզիկայի լթե գիտակցությունը իր հարազատ տան մեջ է` կեցության մեջ կեցող հիմունքի հետևանք, թե նույնացումը նպատակաբանված է, իմաստավոր պատճառակցված, տելոլոգիական հարմարավետությամբ բանական և ոչ բանական արարածների համար, որպեսզի իրականանա նախախնամության օրենքը` ոչինչ առանց «բավարար հիմունքի» [ Լայբնից ]:

Երկու բան, որ հավասարապես սիրում են և Աստված, և սատանան, գոյության հիերարխիկ կառույցն է և Արիստոտելի նպատակաբանությունը, որը ծայրահեղացրեց [ աստվածաբանորեն ] Պլոտինոսը [ նա, առհասարակ, նախորդներից միայն սա չէ, որ ծայրահեղել է... ]: Մետաֆիզիկան փաստաբանի դեր էր կատարում Արիստոտելի նպատակաբանումը արդարացնելու մեջ, ու նրա մտքով չէր անցնում` իր դատապաշտանումից ոգեշնչված համաշխարհային Նպատակը ծաղր պետք է դառնա մարդուն, երբ պարզվի, որ մետաֆիզիկան իր փիլիսոփայական Աստծուն չի գիջելու կրոնականին [ Պլոտինոսի «Աստված» փիլիսոփայական է, քան կրոնական ], ու Նպատակի առաջ պատասխանատվությունը չի կրելու ոչ ոք, ոչ ինքը, ոչ կրոնը, ու ոչ էլ մարդը:

Քանզի չարիքը միակն է բոլոր հասկացություններից, որ չի դադարում չարիք լինել, բարիս որակական իմաստով, ամենանրբամիտ վերագարկումների մեջ: «Կարո՞ղ ենք արդյոք ստիպել մեր մաշկին, որ հավատա, թե խարազանի հարվածները միայն խոտտու են անում իրեն: Կամ համոզել մեր ճաշակելիքին, թե օջինդրի թուրմը սպիտակ գինի է», [ «Փորձեր», գլ. 14, ]: Էպիկտետոսի «սուբյեկտիվիզմից» ոգեշնչված Մոնտենը, երևի թե, հենց Էպիկտետոսին էլ հակադարձում է տարակուսանքով, հույն փիլիսոփայի այն պնդման դեմ, որ մեզ տանջում են ոչ թե բուն իրերը, այլ իրերի մասին մեր պատկերացումները: Ճիշտ է: Բայց ինչպիսի՞ հանգամանքներում:

Եթե Միակի արտահեղումով, թեկուզ ցածրագույն մակարդակում է դա մակաբերում, մենք մտահասուն ենք դառնում [ բարիքի հետ ] չարիք հասկացությամբ, ուրեմն այն իրականությունից է արտացոլվում [ «հայելիագմամբ» ] մեր գիտակցության մեջ: Եթե իրականությունից է արտացոլվում, ուրեմն կա, թեկուզ որպես էլոդոս [ մտապատկեր ]: Եթե այն Միակի արտահեղումով է, ուրեմն նախազոյական անհրաժեշտությամբ կա [ Պլոտինոսի Մոնադը դեռ մասնատված-տարբերակված չէ ]: Եթե անհրաժեշտորեն կա, ուրեմն. «... կյանքի բազում ձևերի գոյությունը անհրաժեշտություն է, միթե՞ն հնարավոր է, որ այդ ձևերում ստորակարգները լինեն առանց բարձրակարգների, կամ բարձրակարգները լինեն առանց ստորակարգների

**առկայություն: Նա, ով ուզում է աշխարհը տեսնել բացառելով նրա միջից ստորակարգը, նա բացառում է Նախախնամությունը**» [«Էննադներ», գիրք 3, 3-7]:

Ստորակարգը չարիքն է ըստ Պրոտինոսի սանդղակի, և այն նույնքան Մեկի-Միակի արտահնդումի «լիություն» ու «հազնգվածություն» է ապահովում, որքան «բարձրակարգը» [բարիքը], ինչպես պետք է ձգտենք՝ ստորանկայությունից [«նախասնտրի անկումից»] նստումսմբ դեպի Այն, ինչպես որ արտահնդվել ենք, դեպի Միակը՝ Աստված: Կենցաղային «հազնգվածությունը», և բարիքով, և չարիքով, ընդունել է պետք, որպես Միակի «բխումի» հայելիացում: Ինչքան լի է «բխումը», նույնքան լի պետք է լինի աշխարհը՝ իր բազմազանության մեջ սպառված, աներևակայելի ու երևակայելի գոյերով ու գոյություններով: Աշխարհի թերապարտությունը հատթահարված է մինչև վերջ: Միակը-Միականը, Նախագոյը, Աստված ու Աստծո լույսը «բխումի» այդ լիության մեջ ոչ կարող է առաջ շարժվել, ոչ կարող է նո գնալ, ինչպես Չևսի արձանն է լցված ինքն իրենով: Ու բովանդակությունը յուրացվում է ձևի կողմից, և ձևի յուրացումն է բովանդակության կողմից, մինչև արևին հասցված և լիությանմբ, որ մեր միտքը երևի չհասցնի նյութի այդ հազնգումը ընկալել:

Այն ի բն է, ինքնին զարգացումից զերծ, ներգործում է, թեև չի ներգործվում: Ավտարակիա, -ասում է Պրոտինոսը, -ինքն իրենով բավարարվելու տրվածություն, իրեն հաջորդող ելևէջները [Բանականություն-միտքը իր ենթականերով, Հոգին իր ստորագումներով և Մատերիա-չարիքը իր «իջվածքներով»] տաբուացված են նրանով: Նրա մեջ են՝ նրանից դուրս: Ինչպես ինքն է այդ ելևէջում, հասնելով մինչև այստեղ՝ նյութաշխարհ, որ ինքնակա գոյի չգոյն է [«չարիքը»], որքանով սա Նախակերպի, Նախագոյնի էության չքացումն է:

Նյութաշխարհում նրանից ոչինչ չի մնում, բացի մարմնավոր լինելուդ ստրկացումից, քանզի Միակը այլանալով [«այլացումներ սպառելով»] ելևէջներում, մինչև հասնում է նյութավորին, ուր մենք ենք, կորցնում է իր աստվածային ուժը, ինչպես «գույսն է չքանում յավարի մեջ»:

**Միակի նաաստիճանը [ սա քրիստոնեական Սուրբ երրորդության սերմանումն է, նման ստոիկների I o g o-s p e r m a t i k o s-ին, Միակով-Բանականությանբ-Հոգով], եթե ժամանակի մեջ է ըստ ստորագման արտահնդվում՝ հետզհետե «հազվագյուտը» կորցնելու նախախնամությամբ, ինչպե՞ս է Միակը իր նզակիությունը վերգտնում, ընդ որում ժամանակից դուրս, չ՞է որ, եթե Միակը հղացման իր հունդը ունի սկզբնապես, ինչով որ սերմանվում է-ստորաբաշխվում Բանականությանբ և Հոգով [ իր հաղորդությունից դեռ մի կողմ էլ վտարած լինենք մատերիան], հետո ինչպե՞ս է առհասարակում սուկ գերզայական-տրանսցենդենտ: Իր թողած սերմից ինքը պետք է ծանայելի լիներ: Այլությունը, որ Միակը թողնում է իր միջի Ուրիշին սպառելով, ժամանակի պահանջ ունի ծավալման համար, ինչ՞ու է ուզում այդ նույն ժամանակից դուրս գտնվել: Եվ եթե այդ ժամանակից դուրս է, իսպառ յուրացնելով իր հետևողականությունը, ինչ՞ու է մղվում ընկալելի լինել: «Էննադներ» Պրոտինոսի ջանք են Միակը «բառերով» հասկանալու \* I [ տրանսը միջոց է ]:**

Մենք հարվում ենք սկզբնային Միակի ֆենոմենին համադրության մեջ նոսումնի հետ: Եվ այդ համադրումը մեկնաբանում ենք ոչ թե, սուկ, հարման արդյունք, այլ իբրև լիակատար մտահասություն, թե ֆենոմենի [սկզբնային Միակի] և նոսումնի [ նույնի մեր պատկերացման ] միջև ճեղքվածք չկա: Մենք ի՞նչ գիտենք Սկիզբն ինչ է: Պրոտինոսը դա էլ ասում է: Բայց եթե չգիտենք՝ Սկիզբն ինչ է, ինչպե՞ս է այն նոսումն-անում, «հայելիանում» որպես Սկիզբ: Եթե նրանց միջև կա գոյաբանական տարբերություն, և այդ տարբերությունն է նոսումն-անում, պրոտինոսյան տրանսի մեջ նույնիսկ, այդ տարբերությունը պետք է զգացվի [ այսինքն՝ միաժամանակ Սկզբի-Միակի հետ թերանում է ]: Այնինչ Պրոտինոսը այդպես չի կարծում, չի բացառում Միակի հետ ֆենոմենոլոգիական նույնացումը: Այս նույնացումն էլ պրոտինոսյան հիերարխիկ մտածողության հիմքն է: Եթե փլուզվում է Միակի հետ նույնանալու ֆենոմենոլոգիան, փլուզվում է նաև հիերարխիան: Մակայն մի այլ «գիպվածք» էլ է հետաքրքիր: Եթե հիմքում ֆենոմենոլոգիական նույնացումն է, ինչ՞ու է այն վերածում աստիճանակարգային դիկտատուրայի ստորակարգ սանդղակների նկատմամբ: Նույն նույնացումը չե՞նք կարող ապրել մատերիայի հետ:

Բայց ահա... Միակին հաճելի լինելու համար այնքան եռանդ ու մոլեգնություն ունի այս իրավես սուրբը, որ իր հայելցման հրճվանքը հզորագոյնն է դարձնում իր մյուս բոլոր հավանական զգացումներից ու ապրումներից, ու կամաց-կամաց «Էննադներում» այդ հրճվանքը վերափոխում է [ իր իսկ մարգարեական լրջության կորստյան գնով ] մի անհիթելթ ցնծության՝ այս աշխարհը լավագոյնն է հնարավոր լավագոյն աշխարհներից... որովհետև եթե աշխարհի «հազնգվածությունը» և բարիքով, և չարիքով Նախախնամությամբ է, պետք չէ բողոքել չարիքի անմնացորդ ներկայությունից: Աշխարհը իր այդ ամբողջությամբ է կատարյալ: Հասկանալու համար դա, վեր բարձրացնել նյութից, մերձկնցցել Միակի ինքնության մեջ, որ նա այլ կերպ չէր կարող արտահնդվել, քանզի նա իր «բխումի» մեջ շոայլ է, ի սկզբանե, հորդ-հոսուն-հաղորդ նվիրաբերում է ամեն ինչ, և բարին, և չարը:

**Ասել՝ հայում են Միակը, թերի է ասվածով՝ Միակի մեջ մեր ներկայության չգիտակցում, թյուրիմացություն, այն օբյեկտիվացնելու փրկական մտառք, որ հնարավոր չէ, քանզի Միակը դիսկուրսիվ գիտելիքի բան չէ [ «Էննադներ», 5, 9-4 ]:**

P.S. համեմատության համար: Ներկայել – ներսում լինել, ինչը գալիս է ներ կցականի դեպի ներս նշանակությունից: Կնցության մեջ ամեն ինչ ներկա է: Լինել կնցությունից դուրս՝ հակառակ է պարմենիդյան կնցությանը, որը գիտակցության օբյեկտ չի կարող դառնալ: Իսկ եթե դարձնում են, հայտնվում են ուղեղային «խոլիումատիկ միջանցքում»: Դարձնողին թվում է, թե կնցությունը իրենից դուրս է, և այն «դիտում» է դրսից, այնինչ նա կնցության մեջ իր գիտակցության ներ-կան է տեսնում, ինչպես զնդի մեջ լինելով անհնար է գույնը դրսից տեսնել: Գնդի մեջ լինելով կարելի է ենթադրել, թե գույնը ինչպիսին է ու ոչ այլևի: Էքզիստենցիալիստները սրա համար էին ասում՝ սուբյեկտը չի կարող իրեն օբյեկտիվացնել, ինչպես էլ դա անի, նա ներ-կայում է իր ներսում: Կնցության մեջ մարդու մշտապես ներկայումսի գաղափարը, երբ հայտնվում է ուղեղային «խոլիումատիկ միջանցքում» \*2, որպեսզի չխճովեն միստիկական շփոթի մեջ [ «խոլիումատիկ լուսածր» չառաջանա ], կամ ընտրում են տրանսցենդենտ 1-ինը [սուբյեկտ-օբյեկտ], կամ տրանսցենդենտ 2-րդը [սուբյեկտ-սուբյեկտ, տե՛ս, «փիլիսոփայական խոլիումատիկը» ծանոթագրումը]: Այն, որ Բարձրագույնն է քաշում մարդու մեջ իր ներ-կայումսի վարագույրը, և այն, որ մարդն է միաժամանակ բռնել վարագույրը մի կողմ քաշելու քուղը, որպեսզի ինքը նույնպես ներ-կա լինի Աստծո մեջ, -թափազանցվ է, ահա, այս նրկվում ներ-կայացման տարածք, Պլուտինոսի ասած «նյութականի գրկվածության» լուծումը: Որովհետև, եթե մարմինը գրկված է վարագույրը քաշելու գիտակցումից [ Նախագույնի լույսը չքանում է մատերիայում սրան դարձնելով չգո, չարիք ], այնուամենայնիվ, պահպանում է «մարդը հոգու» մի մասնիկ, որպեսզի սա թելադրի մարմնին ներ-առկայում աստվածային կնցության ներսում, որտեղ վարագույրը քաշված է և մնում է մարմինը արթնանա: Իսկ մարմնի արթնացումը հոգու արթնացումն է:

Մարմինը շփոթված է հոգու «հանդգնությունից» [ дерзость ], որ անզուշտություն է ունեցել «ընկնել» նյութական սուբստանցի մեջ, իրեն խորթ վայր է վրիպել՝ մարմնաշտությունը լինելու արտառոց մի վիճակում: Եվ տազնապաժ է մարմինը, որպես ժամանակավոր բնավայր հոգու համար, շնչահեղձումի խուց է: Կարծրանալով-նյութառվելով հայտնվել այնտեղ, ուր քայքայում կա, մահացություն, հոգու համար ի բնե խտտորում էր: Բայց մարմինն էլ այդ կերպառումի պրովակացիան է գգում: Ու՛ր պետք թաքնվիր ինքը: Ինչպե՛ս պետք է խուսափիր հոգու «հանդգնությունից»: Ինչ՞ու ընտրվեց, չ՞է որ, ինքը չի ընտրել իր «ստորակարգ», ինքը չի տարածվել, չի ծավալվել, չի «հանդգնել», այլ իրեն հանդգնել են, առ ինքը ծավալվել են [Միակի արտահերոսը]: Մատերիան շուկա առնելու չի սպասել, այլ իրեն հանձնառել են, քաշել այն անկումի մեջ, ինչի համար պիտի նգովված լինի: Տե՛ղն է նյութի հետ հպվելու դիպվածը նախատեսել, ոչ թե հակառակը, նախահակվածը ինքն է եղել: Իսկ մեղադրվում է միայն մատերիան այդ պրովակացիայի մեջ: Ավելի, նա արարվելով՝ իր արարված լինելու համար պատասխանատվությունը միայն ինքը պետք է կրի: Ու ոչ նաև նա, ուսից որ ծնվել է: Եթե պատասխանատվություն չի կրում, չարյաց արմատ է: Իսկ գուց՞ե, մարմնաշտության պոտենցիան դեռ չհայտնակերպված, հոգու թովչանքից նվաճվել է, նյութառվելու հնարավորությունը նրան սիրել է սովել Միակին, ոգեղ Գերագույնի շաշտությունը, լիությունը: Իսկ... ահա, անսիրության մեջ, Էրոսին անհատորակից լինելու մեջ մեղադրվում է միայն «ստորակարգ» սուբստանցը: Ավելի ճիշտ՝ Պլուտինոսը սիրո-էրոսային տենչը վերագրում է մատերիային, բայց «վերջից» [ ի վերջոյ ], ստորին սուբստանցիայից դեպի բարձրագույնը վերադարձի ժամանակ [ «... վերին աստիճանները, - ասվում է «Էնենտադենրում» - նպատակ են ներթափանցիկ համար » ]: Մինչդեռ մենք կարող ենք, չ՞է, հավասարապես փաստել՝ Էրոսը մատերիայի համար «վերջից» չէ, այլ սկզբից [ ի սկզբանե ]:

Միակը հասկանալու համար, թե ինչ՞ու է այն «անհասկանալի-անըմբռնելի», պետք է գիտենամ՝ ինձ անհրաժեշտ է մի իմացություն, որ ուզում է գերազանցել իր սահմանները, ապա վերադառնալով իրեն հասկանա ինչ՞ու է ուզում ըմբռնել մի բան, որ ինքը հռչակել է անըմբռնելի: Նախքան Պլուտինոսին ձեռք մեկնելը [ հատկապես նրա տրակտատներից « Չարիքի բնության և ծագման մասին » գլուխը « Էնենտադենրի » առաջին գրքում ] չէի կարողանում գուցել Պլուտինոս անվան շուրջ ակնածանքով լսածներիցս ծնված իմ բարյազկամության մեջ, այնուամենայնիվ, մի տարակուսանք, որ եթե նա այդքան վերանցական է [ բրահմանը կնախանձեր իր մարմնավորված լինելը նա ինչպիսի՞ անեծքով է վտարում իրենից, որ նրանից ոչ առաջ ու ոչ էլ հետո ոչ որ չգերազանցեց ] հիասթափություն չէ՞մ ասարի՝ դեռ ինչքա՞ն կարող են այդ պլատոնականները գտել Պլատոնին, դեն նետելով բարոյականի սոցիալականությունը, թողնելով սուկ «էրոսների» քմահաճույքը:

Դրվատանքս հիշեն Պլուտինոսին: Իր հոգու ճարտարապետությունը ամենայնուհանդերձ է-կանգունը, գարդանաշխվածն է, իր վերնարքիվերի դասավորությամբ կուռ ու ճարտասան, ու իր հառնումների ժամանակներում էլ, երբ էլ դա լինի, նա ոչ նյութն է առնելու որպես կին, ու ոչ էլ իր մարմինն է խնամելու, որպես այլ, և լինելու է նույն հրեշտակը իր իսկ ճարտարապետած սանդուղի վերանաստիճանում, ու ոչ մի պլատոնական այդքան ինքնակատույց չի եղել, որ նա է:

Մարմարի բեկորը՝ ճեղքելիս, ինչպես մի կտոր թռչի հատիչի հարվածից ու պոստի քարհատի հոնքատակը, մարմարի կաթը բծավորվի արյան կաթոցից, ու նա չփորձի էլ դադարեցնել արնահոսքը, այլ շարունակի չմահավան կարծրահուսկի մեջ իր քանդակը պնդել, - Պլուտինոսը այդպես քամարում է այն ամենը, որ նյութավոր է, գոյազգայական, ու դրանց կոպտությունից ու քերծումներից արյունոտած չի դադարում կառչած մնալ իր հավատից, թե լավագույնը, կյանքի բոլոր ձևերի հազնվածությամբ, այս աշխարհն է: Ի՞նչ կա, որ պետք է արտահերոսը Միակից հանուն Բագումի, չի հղացվել: Ու դա ոչ թե կատաղի գնձությամբ, որով կարող էր նայել «պարտված» մատերիային, այլ այս աշխարհից ոչինչ չտանողի

ներողամտությամբ, հանդուրժումով, նույնիսկ ուրախությամբ, որ պարտված նյութի մեջ ինքը տեսնում է՝ մեր մեղսանկումի նպաստահամանված լինելը, թե՛ դա որոշակի նպատակի համար է, ու պետք չէ բողոքել չարիքի գոյությունից: Պլուտինոսը ըստ մարմնի իր նմաններից, որ մահկանացուներս ենք, նույնքան է տարբերվում, ինչքան Նարեկացու աղոթքը մեր քահանայապետների մրմնջոցից

Միակ-պատճառի կանխահաս խնամքով աշխարհի լիացած-լրումն առած-ավարտուն «հագնցվածությամբ» Պլուտինոսի հիացումով սխրանքն է նռաբանության ուսմունքը, անփոխարեն-անփոփոխ, իր ժամանակների մարդկային իմացության վարձքը այնպես լի վճարած, որ Պլատոնը կարող էր անհոգ, այլևս «անգործածական» մի քանի դար ապրել:

Այնուհանդերձ, Պլուտինոսի հանդեպ ակնածանքիս ու դրվատումիս ինքնամոռացման մեջ էլ, չեմ կարող մոռանալ «Կանդիդից» մի դրվագ:

Պանգլոսությամբ [ հնարավոր լավագույն աշխարհներից այս աշխարհը լավագույնն է] դաստիարակված Կանդիդը վտարվում է ազգականի կալվածքից, ժամանակ անց նաև իր դաստիարակը՝ Պանգլոսը, ում անսահման լավատեսությունը գլուխը ինչքան էլ ծառայեցրել էր բավարար հիմքի, թե՛ չարիքը իր ֆունկցիան ունի, որպեսզի սա էլ, ինչքան բարիքը, աշխարհը մղած լինի դեպի լավագույն նպատակ, -պատճառների ու հետևանքների աննորմալ աշխարհում վեներալիտից նվիրող իր մարմինը Եվրոպայով մեկ քարշ տալուց հետո, երբ պատահաբար հանդիպում է աշակերտին՝ Կանդիդին, սա, որ նույնքան բզկտվել էր լավագույն այս աշխարհի հարվածներից, գրեթե խեղանդամ, տեսել էր անպատում թշվառություններ, և հաճախ էր եղել, որ խնդրել էր իր բանական եղբայրներին՝ շնորհ անեն իր գլուխը փշրելու, քան շարունակի հավատալ ուսուցչին, համարձակվում է կասկածել. «Արդյո՞ք, այս ամենի արևատը սատանայից չէ»:

Տվեք ճարտարագույնը հղացումներից, որ նրա միջոցն ու նպատակը ամբողջի ներդաշնության ու նախախնամքի պաքը ցույց տված լինելը, թե՛ հանուն ինչ՞ի է հոգին իր նրանությունից իջել ու հայտնվել մարմնավոր բանտում [ Պլուտինոսի համար ողբերգությունը այն էր, որ Միակից տարանջատված հոգին չպետք է այդպիսի մեղսալի անկում ունենար, չպետք է մարմնավորվեր], տվեք առաջնախնամ Միակի «լիության» հանգելու պատճառաբանումը, որ զեղոված է այն ամենը, ինչը չի նպաստում գոյերի Գոյի ամբողջությանը, որ այդ Նախագույնը իր աստիճանակարգ օրենքը նվաճած լինի կենցության հանգույցներում ստորից մինչև Անմերձը՝ իր նմանությամբ [և այլությամբ] այդպես իմաստուն դասակարգվածի նպատակալայաց հառնումը կենդանացնող, տվեք նրա խորհրդավոր էջքի ամենախորամիտ սահմանումները, թե՛ ինչպե՞ս է թանձրանում լույսը ու «սառույց» միախառնվելով մատերիային, ցույց տվեք ձեր «ճառագող» նվաճումը, թե՛ ինչպե՞ս է այն տիրում նյութականության սահմանագծված եզրերներ՝ առնում նպատակ ու միջոցի ներգործուն հոսքի մեջ, ապա դուրս մղում նյութը իր ծիրից որպես չարիք, տվեք, ու մի երկվտեր, ամենայն ավերակությամբ չի սպասվի իմ հիացմունքը ձեր մտքի տարերքի հանդեպ, տվեք, բայց միաժամանակ, ինձ հավատացրեք - ձեր իմացության «նպատակն ու միջոցը» ինչքան կարողացել է ճարտարագույնը հղանալ՝ կարգավոր ու վեհությանը, կարող է անկասկած լինել, թե՛ նույն վստահումով կսփոփի այդ համատեսիլից հեռու, բազմաժամանակյան մի խոկումի մեջ տիեզերական Ակունք փնտրող իմաստությունից հեռու մեռնող մանկան մորը - նրան ինչպե՞ս համոզես, որ կա «նպատակ ու միջոց», ինչի մեջ է չարիքի իմաստը:

Հայեցման տենդի սրբազան քրտինքը կորցնում է աղիությունը՝ երկրայինությունը. ծնվելուց մինչև հասկանալու համար հասունանալը, որ պորտիզ կապը այս երկրի հետ ծծկերության կնամանի: Կտրվում ես մորդ կաթից, պորտից, բայց ի՞նչ հասունությամբ էլ լցված լինես, տարիքիդ ո՞ր տարիների մեջ էլ համը կորցած լինես, գոհացիր, -մեղք չանես, խեղճությունը չեղածի վրա, պատրանքների վրա ողբալ չտաս, - հոտառությանդ զգայարանի մինչև մահ ձգվող լացով գոհացիր, որ այն կուրծքն է կանչում, այն կուրծքն է մղկտանք տալիս, աղերում, իր կապվածությունը իր ծնող-ծագումից չկտրելու, երկրայինը, մայրիկությունը ոչ մի փիլիսոփայության չստորակարգելու, անզամ եղև դա Պլատոնն է:

Մատերիան մեր վիշտն է, բայց Օրենքը այդ վիշտն է:

Բնության գաղտնիքների կիսարձակությունը լուսաստվերային հանդերձավորմամբ, երբ ոչ ամեն ինչ է ընկղմնված գաղտնիքի մեջ, ու դեմ ես առնում լուսումնոթի ցրվածությամբ աղջամուղջի, որ ոչ լեցուն է մութով, ու ոչ լույսով է լիացած, ու այդ կիսարձակ գաղտնիքն ինքը նախքան շտապեցնի իրեն գաղտնազերծողի հյուրնկալությունը, թե՛ բաց է նրա առաջ, ինքն իր թերատությունից ներքաշվում է բնության խորքերը ու կերպավորվում է կատարյալ առեղծվածի:

Հայեցման տենդի այն իրադրությունում, որ ես պատկերացրի Պլուտինոսին, նույնպիսի միստերիա է բացվում: Կարծես, ուր որ է քողազերծվելու է Նախագույնի, Միակի գաղտնիքը, եթե նյութը [մատերիան] Պլուտինոսի վիշտն է, պիտի որ ամոքվի այն աստվածային լույսի նրանիներով, նրանի այն վշտազյալին, ով արտասպում է մահկանացուի «մարմնականություն» վրա, որովհետև «... ամեն մի սաղմնավորված անիծված է»: Տեղին բերված այս դարձվածքը շեշտավորելն էլ քիչ է, եթե գիտենանք ումի՞ց է, որ այսքան Պլուտինոսի հետ է, և ումի՞ց պետք է լինի, որ և մոռացնել չտա Պլուտինոսի վիշտը, և հիշեցնի իրեն - անկասկած Օգոստինոս Երանելի:

Եվ կատարվում է արտառոգը՝ այն որ Պլուտինոսի վիշտն էր, վերածվում է... Օրենքի:

«Համաշխարհային Նախագույնը հարաբերվելով Բանակախոսությանը ստեղծել է նաև այն, որ մենք չարիք ենք անվանում, քանզի նա չի ցանկանում ամեն ինչ, ինչ իրենից է, հավասարապես բարիք լինի... հարդուսն»՝ Նախագույնից արարվել են ոչ միայն աստվածները, այլ նախ աստվածները, ապա հոգին՝ նրկորդ բնությունը, ապա՝ մարդը, ապա՝ կենդանական աշխարհը, ըստ այդմ՝ ձևավորելով շարժված կարգ - և դա ոչ հենտին մտադրությամբ, որ դասակարգել է այդպես, այլ որոշվեց Նախագույնի խոհեմ բնությունը իր մեջ այդ բոլոր բովանդակում է նախապես բանական բազմազանությամբ: Մինչդեռ սրանք քննելիս մենք նմանվում ենք զեղանկարչությունը շատ վատ հասացող մարդու, ով մեղադրում է նկարչին, երբ նկատում է, թե զեղանկարում ոչ բոլոր գույներն են հավասարապես զվայելի, հաստի չլինելով յուրաքանչյուր դրվագի կարևորությանը, որին նկարիչը տալիս այն, ինչը նրան ներհատուկ է: Եվ պետք ասել՝ լավագույն պնտական կարգը այն չէ, որ անհնարին հավասարություն է բոլորի միջև: Կամ մենք նման ենք ողբեգակին քննադատողին, թե նրա թատերգության մեջ հերոսներից բացի, կան նաև ստրուկներ, շամլիկներ, որոնց լեզուն անբարեխոս է: Բայց չէ՛ որ այս գործող անձանց բացառելը, նշանակում է խաթարել ամբողջ երկի զեղանկարչությունը. նրանցով է երկը դառնում է ամբողջական» [ «Լեննադներ», 3, 2-11 ]:

Պլոտինոսի կենսագիր-տրամախոսը՝ Պորփյորիոսը հիշում է այս ճգնակյացին այսպես. «Հաճախ էր տանջվում որովայնացավերից, բայց միշտ դեմ էր լվացումներին, համարելով՝ վայել չէ իր պես ծերունուն նման բժշկումը: Հրաժարվում էր իր աղիճախտի դեմ թեմիոն օձախտից: Համոզված էր, որ անգամ ընտանի կենդանու միտք սրբապիղծ է, որպես սնունդ: Զգիտեր բաղնիքը ինչ բան է, փոխարենը մաքրվում էր տանը ամեն օր: Եղավ, որ ախտավարակը սաստկացավ, մանավանդ, երբ իր խնամքը հոգացող ծառաները մահացել էին, մնալով միանգամայն անօգնական այդ ախտի դեմ, հիվանդությունը տարածվեց մինչև նրա շնչափողը: Բանի միասին էինք, ախտանիշները դեռ այդչափ չէին ահագնացել: Իմ բացակայության ժամանակ հիվանդությունը այնքան էր խորացել, որ նրա ծայեր ջինջ ու հնչեղ, խաղաղացել էր, հայացքը ամբողջովին խամրել էր, և նրա ձեռքերն ու ոտքերը դարձել էին կաթվածահար: Այս մասին իմ վերադարձից հետո պատմեց մեր բարեկամ Եվստոքիտսը, ով մինչև նրա մահը միակ խնամողը եղավ, մինչև մնացածները նրան ճանաչողներից, խուսափում էին նրանից, որ ցավով չտեսնեն, թե նա ինչքան է անկյալ, որ չի կարողանում արտասանել նրանց անունները» [ Պորփյորիոս, «Պլոտինոսի կյանքը», 2 ]:

Չունենված բան է, ոսկորներիդ վրա կցկտուր կցմցված ինչ որ մարմին ունես, ու դա նեխում է աչքիդ առաջ, բայց չես դադարում բացականից՝ ի՞նչ գեղեցիկ ես աշխարհ:

Չոր ու ձիգ նույն թուլակուշտից սկսվող, ապա աղիներով մեկ ջրագնդո, ասես, ձիգ տարածվել ու որովայնակողերին գարկվում է որոնացող գազանը: Չորացած-սմբած հիվանդին իր հետ դիվահարում է: Լեղձալի կծկված կեճոտում է դեմքը Պլոտինոսը, չոր կաշին է ոսկորներին, ակնախորշերում սեղմվել, մարել է, խամրել է գավր հաղթահարելու աղերսանքն առ Աստված, ու անգամ այդ չոր ու ձիգ մարմնական մտրակումների մեջ չի հուսալքվում. այն, ինչ իր մարմնի հետ է կատարվում, նույնքան է աղերսվում իրեն, որքան ես եմ հեռու նրան հասկանալուց:

Ի՞նչ երևակայած պետք է լինեմ ես ու ապրած այդ երևակայության անիմաստ հաղթահարումը, որ առանց ներշնչումս աղբատացնելու, նրա ամենաաղոտ ուրվագծերը լիացնեմ պայծառությամբ, սովորականի, միջակի, միապաղաղի սահմաններից անցնելու այն կողմ և աջը աղերսելու Պլոտինոսի, որպեսզի իմ երևակայածով իր պայծառացումն ապրեմ – միևնույն է, դրանով ես մնալու եմ ինչ որ կարևոր բան եմ վրիպում տարտամության մեջ, քանզի արդարության դեմ կլինեմ՝ ընտելացած կարծր պատկերացումներին. իմ Պլոտինոսը այն չէ, որ նա է իր միջից լուսազեղել-աննյութեղել Մտքի մի սրբակյացի:

Փիլիսոփայական երկը [ինչպիսին «Լեննադներն» են] և թատերգությունը [ինչպիսին, ասենք, Շնքափրի երկերն են] հաճախ ընթացքում էր ստեղծվում՝ խոհանոցային գործուն ներկայով: Տրակտատը և թատերկը շարադրվում էր տեղում, կոնկրետ ունկնդրի և դերակատարի մասնակցությամբ: Անձնավորված ցուցակն մի բան կար նրանց միջև՝ փիլիսոփայական և թատերգային գրույցի պրոցեսում: Փիլիսոփան ու թարտևարագիրը հաճախ կոնկրետ անձ նկատի ունենալով էին շտկումներ անում իրենց տեքստերում՝ պահի տպավորության մեջ, այսպես ասած, իպրնսիոնիստորեն - և նթե այդպես փիլիսոփայական իմպրնսիոնիզմը չափանիշ ընդունենք մեր այսօրնական ընկալման համար, թե ինչքանո՞վ ենք մենք առնչվում ու հասկանում Պլոտինոսի տեքստերը, կտեսնենք, որ Պլոտինոսի [կամ ասենք, թատերգության մեջ Շնքափրի] նպատակը ուղղակի ներգործությունն էր, անմիջական հմայումը, հմայանքի գայթակղեցնելը, հմայաբեղը, հմայումի փորձության մեջ տեսնելը կոնկրետ ունկնդրի: Ու ոչ այն, թե ինչքանո՞վ է ինքը բացառիկ իր գաղափարներում: Գրով դրանք արտահայտելու Պլոտինոսի մերժումը փոխառված էր մի այլ անփոխարինելիով՝ խոսքը դառնում էր հուշաթղթ, դրամա, հմայագրավ, գեղարվեստ, հմայության հպատակեցնող: Ուրիշ նպատակներ քիչ էր կարևորվում... «Այն, ինչ ես ասում եմ, նորություն չէ...», - զգուշացնում է փիլիսոփան:

Առ Բարձրագույնը ոգումով ներքին սրբազանություն է հղկում, որպեսզի լինի երկրպագությամբ Նրան: Թ՞ե թերահավատ է, կամ Նրան ստորոգելով՝ ամեն ինչի չափանիշը դարձնում է մարդուն, բանականությունը դրանով հենց ոգեղն ու «մարմնականն» է միավորում մի օրենքի մեջ - բանականությունը ինչ էլ բարձրացնի կամ ստորացնի, իրեն է բարձրացնում ու ստորացնում:

Պատճառը մեղմել [ որովհետև բացատրում է երկ-Նախադրվածը,որ ըստ մագդեակաճանության չարը առանձին նախահիմք առնելու ու լուծվելու հարցը],ասել թե՛ Միակի էջքի մեջ ներդաշնակությունը չի խաթարվում չարիքի առկայումնով,ապա հայեցական մասնաբաժնի վստահել,թե տրամաբանելով մարդիկ կհամոզվեն,որ չարիք չկա,կա բարիքի բացակայություն,ինչքան էլ հիացմունք ծնող սահմանումով,չարիքը մնում է չարիք,ինչպես մահն է մնում մահ,-սա է բանականության պարտության մատնվելն է [ բանականությունից օգտվելով մեղմում էս մի բան,ինչից իրականում ինքը բանականությունը ամենացավոտն է զգում],և հաղթանակն է,որքանով բանականությունը փիլիսոփայությունն է որ կա,իսկ փիլիսոփայությունը պետք է նրբեմն խանդավառված լինի իր ինքնաբերական մեջ:Եվ պարտություն է,և հաղթանակ:Եթե լաբիրինթոս է,ուրեմն ելք ունի,եթե ելք ունի և այնտեղ հայտնվածը չի կարողանում ելքը գտնել,մեղավորը լաբիրինթոս չէ,բայց մեղավոր չէ նաև ելք փնտրողը,քանի որ Բանականությունն ինքն է այդ լաբիրինթոսը հղացել ու ինքն է անկարող է այն հաղթահարել:

Չարիքի գոյության մասին,եթե երկու թշնամիներ ունենային տարբեր պատկերացումներ,և գիտակցեին,որ նույն չարիքից են ողբերգություն ապրում,նրանք երկուսն էլ և պարտվող կլինեին,և հաղթող,ու կհաշտվեին,ցավը նրանց կմիավորեր:

Յավի ռեֆլեքսիայի վերջին ճիգը դրախտի երևակայումն է,ուր ցավ չկա:Շնտառվր հարցնում է,գուց՞ե մարմնական մի ահավոր ցավի մեջ է Պոտինոսը հղացել իր դրախտը՝Միակի գաղափարը [ Պատանի «սահմանելի»-«սահմանափակված» Նախագոն Պոտինոսը պարզապես անսահմանելի հոշակեց,սահմանափակելով այն արտահայտող դիսկուրսի հնարավորությունը]:

Չարիքի և նախախնամության «հանունի» միջև [ հանուն ինչ՞ի է չարիքը,որ ըստ էության,-համոզում է Պոտինոսը,- չկա,կա բարիքի բացակայություն,ինչպես չկա ստվեր,կա լույսի բացակայումն ] մեր միջամտումը,որպես չարիքի «ներկայության» մեկնություններ,մեզ այնքան կբավարարեն,որքան եթե արտաքին նշանների վրա հիմնված բացատրություն տայինք միջակայության գաղտնածեսերին. Բառսի,որ կար Ուրանոսից [Միակ-Նախագույնից] առաջ,ծնած որդու՝Էրեբոսի և դստեր՝Նիկսի մերձեցումից [ըստ մի տարբերակի] ծագեց ինչպես օրը,եթերը,մահը,վիշտը,ծնությունը և այլն,այդպես էլ սերը [ Էրոսը],ով կարգավորեց նախահայրական-Բառսայինը: Սրան հաջորդում են նաև այլ արյունակցական- սեռական մերձեցումներ [ որ խորհրդանշում է Մեկից-պոտինոսյան Միակից հանուրի ծագումը և բոլորի նախասկզբնական ազգակցությունը],մինչև տիտանների և աստվածների ծնվելը:

Կլթվա,թե այսպիսի թվարկումը կարող է փոխարինել միջակայան-միաստերիական իմաստներին,որոնց քիչ ենք հասու:Բայց ինչպե՞ս է այս մեկ միս ու արյունից վտարվում մատերիան՝ Հեան,որից ինքը՝Ուրանոսն է ծնվել [այս հակասությունը հեշտ ուտեստ չէ Պոտինոսի փիլիսոփայության մեջ], \*3: Մեծ հայեցողի չքնադատումն էր կրկնում չարիքի [քանի որ մատերիան այդպիսին է] պրոբլեմը քննաբերողներին խճճել է: \*4:Այնուհանդերձ,երբ սրա գոյությունը հասկանալու համար առ ճշմարտությունն ճգնողներին համադրում էս,խնդիրը պարզունակ աստիճանից ցատկում է լուրջ գուգորությունների վրա:

Ինչ էլ խոսենք Պոտինոսի «Էնենադներից» երրորդ գրքում չարիքի ֆունկցիոնալությունից,մեր խորհածները հաճույքով կփախչեն Նախախնամության միտք դրածից՝ «հանունից» - եթե Միակը-Նախագույնը ինքնին բացարձակ բարիք է,որտեղի՞ց չարիքը աշխարհում,կամ եթե նյութաշխարհն է Պոտինոսին հուշում,որ այս ունայն ու վշտի հովիտից [ Կենտ ] պետք է փախչել դեպի հավերժություն,ու դա լավ է,ինչպե՞ս կարող է չարիք լինել մի բան,որ քեզ հուշում է բարին՝ փախուստ,որը լավ է:

Պատկերացնել Բրիստոսին անհաճությանը և մերժմամբ փախուստով,թե ինչ՞ու պետք է Հորից [ Պոտինոսի «Հայրը» Բրոնոսն է,իսկ թե ինչպես է Բրոնոս-ժամանակը արտածվել անժամանակյա Միակից,տես «Մենդոցը»] ժառանգել այս աշխարհում լինելը-տառապելը,-և հաշտվել Պոտինոսի անհաճության հետ,որ բարիք-սեր Միակը «պարտավոր» է դրսևորվել տառապանքի մեջ նույն այս աշխարհում,ուր Բրիստոսը գառան խոնարհությանը հանձնառեց,-անհամատեղ են,չէ,այդ պատկերացումները:Սակայն Բրիստոսը կորստով շատ բան շահելու համար չէր,որ սա հոժարեց,այլ որ ապագա «պողոսականները» [իսկ Պոտինոսը «պողոսական» միասնական Աստծո տեսիլքով էր] Պոտինոսին «ուղղելով» շահեն՝ նրան «կորստից» փրկելով,քանզի ի՞նչ սեր,-կասեն նրանք,-ի՞նչ բարիք,ի՞նչ Միակ-Նախագույն,եթե չի տառապում: Աննվագ, և էլ ավելի՞ հանդուգն մասնակցում ունի մեր բանականության մեջ այն արտառոցը,որ տիեզերաբանները մութ մատերիա են անվանում:Ոչ նվագ փոփոխում,քան աննյութեղ ու նյութեղ տարրերն են բնության մեջ,սակայն,միաժամանակ, հարանփոփոխ ներփակ,որ կարող է նոր «հույս» ցայտեցնել- պայթեցնել իր միջից,որպեսզի նոր երևույթով ու կազմով զգեստավորվի արարչանյութը:Ոչ նվագ հազեցած հնարավոր «էլդոսներով»,քան Պոտինոսի Միակն է,կերպ ու ձև ընծայող արարչության հմայքին,և ապագուցելու հիացմունքն ապրող,որ ի սկզբանե էր Է-ն,սակայն միաժամանակ, այդ մութ մատերիան մեր բանականությունը դարձնում է ան-Էական,գոյ և չգոյ, գոյական ու համանգամյա անգոյությանը,և կա,և չկա [«...Տեր, նախքան այս անձն նյութին կտայիր ձև և բազմապատկություն,նչինչ չկար,նչ գույն,նչ կերպ,նչ մարմին,նչ հոգի,և սակայն,դա լիակատար ոչինչ չէր,այլ ինչ որ անկերպություն էր առանց ինչ որ տեսակի»,Օգոստինոս Երանելի,«Մտաստվանություններ»,գիրք 12,3],և ձև,և անձություն,և Ինքը,և այլություն՝Ուրիշը,և Մեկը,և Բազումը: Աննվագ, և էլ ավելի՞ հանդուգն այդ մութ մատերիան մեր բանականությունը դարձնում է պարզ ու մթին, իսկ «...այն,որ և պարզ է,և մթին,նրա մասին խոսում են՝ կրահելով ի՞նչ է դա,չհասկանալով ի՞նչ է դա...«Էնենադներ»,2,5]:



Մտափոր շիկը սկսում է, նրբ բախվում է իր միջի մութ մատերիային, նրբ ինչքան հասկանում են, այնքան հուսահատվում են, ինչքան հուսահատվում են, այնքան հաստ են հասկացման, որը և փախուստ է բորբորում ինչ՞ու եմ մտածում այն, ինչ մտածում եմ բնագրից, նույնքան էլ կաշկանդում է, քանզի փախուստը առանց մտածումի չէ: Թե՛ ինչ՞ու է մատերիան չարիք [Պոտինոսը տատանվում է «չարիքի» որսի մեջ, մինչև նյութին-մարմնավորին «մեղադրելը» անհատական հոգիներում էր ի չարն հեղվածը որոնում], դառնում է և գայթակղող, և առիքնող, ահա, ինչ՞ու կռահելով՝ եթե մատերիան որակագուրկ է, իսկ չարիքը մատերիան է, ինչպե՞ս կարող է չարիքը որակագուրկ լինել [Պ.Բոննակի, «Պոտինի փիլիսոփայությունը», ֆրագմենտներ] հակասությունը, Պոտինոսը չարիքի գոյության այլ բացատրություններ է փնտրում:

Հիմա, մութ մատերիան բանականության մեջ Պոտինոսին և ձգում է, և վանում: Ինչ՞ու:  
Պոտինոսը ունի մի թաքուն վախ արտահերոսի առաջ, որ իր շրջաբերումների, փոփոխումների, ըստ սանդղակների գտումի [Բանականություն-հոգի-Մատերիա] միջով անցնելով կարող է, ի վերջո, նյութական կապանքի մեջ մնալ, գերելավարվել «մարմնական» աշխարհում [«այստեղ»], թանձրանայ-դանդաղածոր գորշի ճնշումից, չազատագրվել, ստրկանալ մարմնին, ուր բանտարկված ենք բնության կողմից [«Պոտինոսի կյանքը», 1, Պորփյուրիոս], ու վերադարձ չունենալ դեպի Ակունքը [«այնտեղ»], որտեղից բխել է, ուստի Միակի էջքը նա օժտում է՝ որքան նվազմամբ, նույնքան և նտածմամբ, ինչքան եզակիության մեջ, նույնքան գուգամիասնության մեջ, եթե աստիճանական ստորակարգմամբ, ապա նաև գոյ-անցական թռչչոյ դարձյալ առ Միակը-Նախագույնը: Եվ դա Պոտինոսի վախից է իր ներքին մութ մատերիայից:

Քամելիոն-պատկերների վերակերպավորումը, նկատած կլինեք, ձեր ո՞ր դիրքից է կախված, ձախից ա՞ջ, թե՛ աջից ձախ, նայած ո՞ր կողմից եք դիտում քամելիոն-պատկերը, իսկ պատկերը ավելո՞վելով, տեսել եք, չէ՞, ինչպես է կերպավորվում: Եթե միջանկյալ կենտրոն նայեք քամելիոն պատկերին՝ առանց շարժվելու, ավելո՞ծումը դադարում է: Պատկերափոխ նկարի երկու «երեսները», կարծես, միատեղվում են, նրանց ուրվագծերը, ասես, համընդհանրվում են, գրկում իրար, և աղոտ կարող են տեսնել ո՞րը որն է: Քամելիոն-պատկերը գույգ-գզնտավորվում է: Մետամորֆոզը այդ ձևանցումի մի պահի վրա կանգ է առնում, ու կարող են նկարի երկու «երեսներ» էլ տեսնել:

Պոտինոսի գոյաստիճանները, Միակից մինչև մատերիա, հենց այդ քամելիոնային միջանկյալությամբ են: Բանականություն-նուսը և խելքն է, և խելքը չէ, հոգին և մեկն է [համաշխարհային հոգին], և Բագումն է [անհատական հոգիներ], մատերիան և ստորագույնն է, և առ Միակը վերելքի սկիզբ, Միակը և մտահաստ է, և ոչ:

Քամելիոնի գունափոխությունը հաղորդակցվելու համար է: Պոտինոսը փարատում է իր վախը իր բանականության մեջ՝ մութ մատերիայից, դիմելով իր սանդղակների այդպիսի մի գունափոխության:

Եթե դիտարկեք չի անցնում Միակի գոյաբանության մեջ, այլ նրա մեջ ապրելով՝ «ապրումի վերագայությունը»՝ մարգարեական փայլատակմամբ կարող ենք հայել նրան, որպես նրա առէջքային սերմնահատիկ [զերագույն Մոնադի «սերմնահատիկներ» ենք մենք, «բագում հայելիներով» արտացոլվածք], եթե տրամաբանությունը այստեղ գիջում է «ապրումի վերագայությանը», որի դեպքում միայն կարող ենք հաստ լինել Միակին, ու՞մ որ կուզեք՝ տկար համարեք Պոտինոսին հասկանալու մեջ, ու՞մ որ կուզեք՝ ողորմամտորեն խղճացեք, որ չարժե նրա վրա յստանալ, թե՛ նա չի հասկանում Պոտինոսին, բայց ես ուզում եմ տկար մի հարց տալ՝ ի՞նչ հիմքով է նա Միակի մասին իր «ապրումը» վստահում տրամաբանությանը, որպեսզի ինձ ապագուցի, թե՛ ասենք, այս աշխարհը հանձարեղ է հղացված, թե՛ Նախագույնը բացարձակապես բարիքով է արտահերոսվում:

Ով ընթերցել է «Էնենտաները», նա չ՞ի ապշել, Պոտինոսը ինչպիսի սահմանումներ է վայելում իր իմացության թռչչի մեջ, ինչ մտահանգումներ է սերմանում իր սահմանումներից առաջ, ինչ պատկերացումներ է ենթադրել տալիս իր հետնորդների համար, որ իր պայծառացումները որսալու և մեկնելու մեջ մենք նվազ վայելումով չլինենք նաև մեր իմացության հանդեպ, ինչքան որ ինքն է՝ Պոտինոսն է հրճվանք ապրել տրամաբանելու յստականություն մեջ, և դա ինչպես է հաստատում իր գգայածի, իր մտաբածի, իր հավատի ակնհայտությամբ:

Այն, որ մինչպոտինյան փիլիսոփայությունը շարժվում էր անցնելով հոմերոսի և հնիոդոսի «միջով» ու բանաստեղծական ինչպիսի հղկում է առնում կապված մի.ֆ-մետաֆիզիկա ներհյուսական հանգամանքներից, Պոտինոսի մոտ հարստանում է նաև խիստ տրամաբանումներով:

Եվ այդ ամբողջը հանուն ինչ՞ի, որ թույլ տված մի անմտություն [«այս աշխարհը լավագույնների մեջ լավագույնն է»] գերագանց՞ի ողջ լրջությանը, որ իր գրի վարքը մի դարձվածքով մեղանչ՞ի իր գրի վաստակի առաջ, որ ինչքան էլ սանձահարված պահի մտքի վարքը տարիքի խոհմտությանը՝ մի բացթողմամբ անուշադի՞ր լինի խոհմտության առաջ, այդքան խիտ-խիտ ծավալումներում արքսո՞րդ ման ածի, մի վրիպանք [չնայած ի՞նչ, «լավագույն աշխարհը» տրամաբանված է], ու այդ ամբողջը ինչ՞ի համար – Միակի առաջ երկրորդածությունից այլայլունք լեզվին բերի, կարծելով, մարդիկ դրանից իմաստություն կբաղեն:

Հաստատական ոչ մի նդանակի կարիք չունեցանք, որ մեր խոսքը առաջնորդենք ժամանակ առ ժամանակ հավաստումներով, թե՛ առաջին դեպք չէ, որ խոսափում ենք անսեր շարադրանքներից, կարծես, ասված



բաները լսել տալու տպավորությամբ, և Պլոտինոսի աննախադեպ խրթին Միակի երևութաբանության մեջ, թեև կուգ սխալվելու գնով, դեռևս չնկատվածը բացահայտելու փոխարեն, գբաղվելիք թվական հիշատակումներով՝ ո՞ր տարեթիվին ի՞նչ է նա երկասիրել: Այլ նրա հակասական ու ծանր փիլիսոփայություններում՝ \*5 պարզունակ կարծիքներով նախապաշարված քննողների պես չվարվեցինք, և ցանկացանք հիշված լինել մեր երբեմն խեղճ դատողություններով՝ չարիքի գոյության մասին նրա «տրամաբանական անհրաժեշտություններից» վրդովված, ինչը իր մարմնական կորստի մեջ նույնիսկ չտրտնջացող այդ երանաշնորհ էակը՝ Պլոտինոսը, հավատացած նմ, կենրի:

### Ծանոթագրումներ

\*1. Բառերից ետ նվաճել այն նախապաշարումները, թե իրենք միշտ մեր մտքերի նշաններն են, նրանց հայտնությունն են: \*Բառերը երբեմն կարող են բխել ուղղակիորեն մեր ձեռքից: Ձեռքը թղթի վրա է ու վայրի հետքով [Ներակրիտ] բառեր է շարում: Միտքը այդ պահին կարող է չմասնակցել, թե ի՞նչ նշաններ է թողնում ձեռքը թղթի վրա: Աշխարհում կան այնպիսի «անտրամաբանական»-ներ՝ Աստծո գաղափարի հետ անհաշտ-չբռնող, որ նախընտրությունս բավարարելու համար, թե չարիքի գոյության հիմնավորումներից, պատճառական հիմքերից ո՞ր մեկը գոնե ճշմարտամոտ կրնդունեն, ամենից լավ համապատասխան են կհիշեցնելի սա. հաճախ Աստծո ձեռքն է «փմաստներ» թողել այս աշխարհում առանց մտքի մասնակցության: Չկաշենք Բերդյակից, որ աշխարհում չարիքի իրավաստիքության հետ «ստորօրինակորեն» չհարմարվողներից էր [«... չարիքի գաղտնիքը ազատության գաղտնիքի մեջ է: Առանց ազատության գաղտնիքի ըմբռնման չի հասկացվի Աստծո ստեղծածում չարիքի ներկայության անտրամաբանական փաստը»], մեզնից ո՞վ Աստծո ստեղծածում չարիքի ակնհայտության իրացիոնալ ապրումը չի ունեցել, չի երկմտել՝ Բարձրյալի ճարտարապետումի մեջ սա դեմիոգյան անհավասարակշռության հետևանք չ՞է, դժբախտ հանգամանքների բերումով աշխարհարարման պահին մի ճակատագրական քմայք չ՞է, որ թանկ է արժենում մեզ՝ ապրողներին:

\*Պլոտինոսը Բանականության և Հոգու եռաբանական կապը համեմատում է մտքի և միտքը արտահայտող նշանի՝ բառի կապի հետ:

\*2. Փիլիսոփայական իդիոմատիկը: Արտաքին աշխարհը գծագրվում է մեր մեջ իդիոմատիկներով, ինչ իմաստ որ առնում է այն, որ հետո ստանում է որոշակի նշանակություն, իդիոմային է: Մեր ուղեղի նոտմեն- աշխարհը թարգմանում է այդ ներհոսքը: Յուրաքանչյուր անհատի մեջ թարգմանությունը կատարվում է իրեն առանձնահատուկով: Պարմենիդեսի Միակի կեցությունը հայդեզների ուղեղային table-ն \* այլ կեց էր իր վրա գրառում-«թարգմանում», կամյույինը՝ այլ կերպ, Սարտրիեր՝ այլ կերպ: Առջայ ընթացքի մարդը միանգամայն տարբեր է այն իդիոմացնում: Պարմենիդյան Միակի կեցության միջուկը տրոհվում է: Այն, ինչ նկատի ունեն Պարմենիդեսը կեցություն ասելով, մնում է իդիոմա իր մեջ: Տրոհումը բերում է ընդամենը մի հասկացության բազում տեղայնացումներ: Ուղեղային table-ների տեղայնացումները շղթայական փոխներգործման մեջ են, ամեն մեկը պաշպանում է իր «թարգմանությունը», որովհետև ոչ որ չգիտի ի՞նչ է կատարվում իդիոմային այդ փոխանցման պահին, բացատրությունը կարող է միայն միստիկական լինել: Նրանք հասկանում են իրար, բայց կարծես թե «չհասկանալով»: Ոչ թե, որ չեն ցանկանում, այլ որովհետև ուղեղային table-ի կառուցվածքն է այդպես իդիոմատիկ:

Միտքը քանի խորք է առնում իր մեջ, փոխվում է իր շրջված պատկերի: Ինչ սկզբից ընկալվում էր ակնհայտ, պատճառակցորեն հասկանալի, իր բանական հուսալիությունը կորցնում է, շրջվում է դեպի մի սահմանի, որ անբավարարվածություն է զգում սկզբնային ընկալումից, ու կարծես, թափանցել է ուզում իր բացած-շրջաբերած «անհատակը», ու քանի իջնում է այդ իդիոմատիկ իջվածքը, այնքան մոտենում է կեցությանը, որ ինքը կա, որքանով այն Տեղը, ուր ինքը հայտնվում է, նույնպես եզակի է: Սա գիտակցության համար, կյո՛վա, մի անկում է ինքն իր մեջ՝ իր մոթ շրջվածքները այլ կերպ տեսնելու: Գիտակցությունը, երբ իր անդունդում է, նա հույսով է:

Միակության ակնհայտը [ Պարմենիդ-Պլատոն-Պլոտինոս... մինչ հուսնել, որ տրված է գիտակցությանը, որպես տրասցենդենտ- առաջին ընկալում, մտառում է այն Միակը, որ գիտակցությունից դուրս է, ինչից հետո առանձին տրանսցենդենտ-երկրորդ ընկալումով մտածվում է արդեն մտառվածը [Միակը որ գիտակցության մեջ է]: Առաջինին և երկրորդ ինքնըստինքյան ընկալումները, որ միասնականության նախահիմք ենք մենք կարծում, նույնը չեն: 1-ինը օբյեկտի սուբյեկտիվացում է: 2-րդը սուբյեկտիվացածի «սուբյեկտիվացում»: Միակը, Աստված ֆենոմենոլոգիական տրոհում է ապրում: Միակը երկվանում է: \*Բայց մենք շարունակում ենք Միակը մտածել, որպես մեկ ընկալման առարկա, որպեսզի Աստված մեկ լինի, լինի աշխարհարարման մեկ պատճառ, մեկ արարիչ, լինի մեկ ճշմարտություն «վեր ժամանակային կեցությունից, ծագումից ու ոչնչացումից» [ հուսնել ]:

Արտաբուստ այդ մեկը հանուն մեկ Աստծու է, հանուն մեկ ճշմարտության կամ հանուն Միակի, մինչդեռ դա մեր ուղեղային table-ին է պետք, որ իրեն նույնացնի գիտակցությունից դուրս Աստծուն և ճշմարտությանը, և իրեն զգա միակորեն Աստված, միակորեն ճշմարտություն: Կյո՛վա այդպես մենք ենք ցանկանում: Ոչ: Այդպես

ուղեղային table-ի կառուցվածքն է, որքանով այն իդիոմատիկ է: Չկա մի բան, որ մենք ընկալենք, ու դա չվերաբերվի իր միջի իդիոմատիկին: Այն «գարգամանվում» է այլ գիտակցությունների համար, ինքը՝ անթարգմանելի: Սա ոչ ազնուստիցիզմ է, ոչ սկեպտիցիզմ: Իդիոմատիկը թարգմանվում է, բայց ինչպե՞ս... Բուդդիզմը այնքան էր, որ հետո դարձավ կրոն, -ասում է Կամյուն: Բուդդիզմը այնքան էր: Մի վիճակ նրա հետ: Բուդդիզմ-իդիոմատիկը այդպես է թարգմանել նրա ուղեղային table-ն:

Իդիոմատիկ միջանցքի շնորհիվ կա Մտքի բազումը: Միայն մեկ ֆրագ [նիզընական Աստված մեռել է] ստացել է այնքան իդիոմատիկ փոխադրություններ, որ լավ է տեղյակ չլինեք այդ միստիկական շփոթին: Չնք գտնի փիլիսոփայական մի հասկացություն, որ մտածելի դարձնելով չհրեին իդիոմատիկ վիհը: 1-ին և 2-րդ տրանսգենդենտների միջև հուզական դաշտ կա, ուր տրանսբանված մի ֆրագ, մի եզրահանգում, մի հասկացություն անթարգմանելի թարգմանության յուրահատուկ խառնվածք, զանազան տեղայնացումներ է առնում:

Ի մացություն շատումները իրենց հիմքում մի անփոփոխ համոզումի պարտավորագիր են թողնում, որ ինչպիսի մուրհակով էլ փիլիսոփաները իրավունք առնեն շահելու մի գաղափարաբանություն, ստիպված են, ի վերջո, պարտքը վճարել միստիկական շփոթին: Մշտապես ինձ ուղեկցել է այն զգացումը, որ ինչ կատարվում է փիլիսոփայության [և գրականության] մեջ, կատարյալ միստիկական շփոթ է: Նրանց ինքնահակասումներից մի բողոքներ են այդպես չլինել, կպատժվեինք ճշմարտության:

Հուսմելի հետաքրքրում էր ինչպե՞ս է ֆենոմենը [առարկայական, թե՞ ոչ առարկայական ակունքից հղված] գիտակցության տարր դառնում [ինչպե՞ս է նոտմենանում]: Ի՞նչ է կատարվում ուղեղում ինտենցիայի ժամանակ, երբ մենք որևէ բանի մտածման հոսքը դարձնում ենք գիտակցության մեջ մտածելի: Վերացարկումը, որ կատարվում է «ֆենոմենների աշխարհից» դեպի «նոտմենների աշխարհ» [գիտակցություն], ի՞նչ է, ինչպե՞ս է իրականանում: Ինչը՝ ինչպե՞ս էլ որ իրականանում է, կարծում ենք, առանց նրկվանալու-տրոհվելու չի կատարվում 1-ին և 2-րդ տրանսգենդենտների միջև: Ինտենցիայի ենթակա ընկալվածք իդիոմատիկ թարգմանություն է ստանում այդ երկուսի միջև, ոչ թե չի ճանաչվում, կամ խեղաթյուրվում է, այլ մասնատվում է երկանդամի [Միակը «երկաստվածություն» է թաքցնում], եթե կարելի է ասել, լքվում է ուղեղային table-ի «իդիոմատիկ միջանցքում»: Այդ աննյանելիության, «լքվածության» ելքը մեկն է՝ Աստված:

Ահա ինչ՞ ու է Կամյուն պնդում, թե ոչ մի տարբերություն չկա Աստծո գաղափարին հանգում են [Կիերկեգորը և Հուստելը] «բանականության պարտությանը, թե՞ հաղթանակով» [Կամյու, «Փիլիսոփայական ինքնասպանություն»]: Պրոտիստոր հաղթանակով է հանգում: Հուստելի ֆենոմենոլոգիական Աստվածը, - շարունակում է Կամյուն, - այնքան էլ հեռու չէ Կիերկեգորի ոչ ֆենոմենոլոգիական Աստծուց: Նրանց ինչպես փիլիսոփաներին ընդհանրապես, այդ թվում՝ Պրոտիստիսին՝ միատրոմ է մեկ պատճառի՝ Միակի որոնումը: Մետաֆիզիկային խոսեցնել է տալիս մեր ուղեղային table-ի իդիոմատիկ միջանցքը, որ կերպարվելով է վիհի, անդուդի, եթե չէր դնում ձեր առջև մտածության սահմաններ: Պետք է գզուշանալ սրա վրեժխնդրությունից, եթե խելագար փորձ եր հղանում մտածելի ենթարկել անվերջ իտերացիայի՝ փոխարաջյալ անվերջության: Մետաֆիզիկական պետք է լսի այնքան, ինչքան նրան լսել է տալիս կրոնը:

Հավատքի մարդիկ, որ պակասում են, նրանից չէ, որ անհավատներն են բազմանում, այլ որովհետև հավատավորներին մետաֆիզիկական այլևս չի հետաքրքրում: Կրոնը հեռու է իդիոմատիկ վիհից, որոհե՞տև այն վերջանում է Աստծով-սահմանով-«հիմքով» ու բավարար «հիմունքով»: Մետաֆիզիկական «հիմքը» հիմնաքննում է ինչ՞ ու կա այն, ինչ կա՝ to on-ը - գոյը: «Ուշ» Հայրենգերը գլխիվայր դրեց «հիմքի օրենքը»՝ ինչ՞ ու կա me on-ը, չգոյը-ոչինչը:

Իդիոմատիկ վիհից գզուշանալը ստիպել է մետաֆիզիկային տրանսբանական օրենքներ սահմանել՝ ինքը լինելով իդիոմատիկ միջանցքի առարկա՝ գերընկալումով տրված, բայց նրան պետք է տրանսբանությունը ընդդեմ նրա, ինչը հիմնագուրկ է-վիհ է և բազում վերաթարգմանումների է տանում միտքը: Մետաֆիզիկական, իրոք, հիացմունքի արժանի խելահեղություն է, ուր բանականությունը փորձում է գատկել ինքն իր վրայից: Մինչ սա սահման պիտի ունենա ու չսայթաքի իդիոմատիկ վիհը: Անհրաժեշտ են գզուշագման հստակ նշաններ: Եթե նս մտածում եմ մետաֆիզիկական օրենքները, օբյեկտի՞վ են այդ օրենքները, իրականության մեջ կա՞ն, որ ինձ մտածել են տալիս: Եթե ինձ մտածել են տալիս, ուրե՞մն կան: Իսկ եթե դրանք ընկալում 1-ի մեջ են և իմ գիտակցության մեջ են ի սկզբանե՞ն, ու չկան - և են վերընկալում եմ այն, ինչը սուբյեկտիվ է, ի՞նչ հիմքով են նրանց օբյեկտիվացնում և խոսում մետաֆիզիկական օրենքներից, որ իրականում գոյություն չունեն: Վիհը բացված է: Մնում է գատկել նրա մեջ: Խոհեմություն է մնալ ընկալում 1-ում, ուր հաց հաց է, քարը՝ քար: Խոհեմ է այդպես վարվել: Բայց մետաֆիզիկական հիմնականում խանգարել է այդ խոհեմության անդորրը:

Ես չեմ ասում՝ իդիոմատիկ միջանցքը ինչ որ բան կփրկի, և ոչ էլ այն փրկելու համար է, նս ասում եմ՝ գզուշացել նրանից, ու մի գարմացել, որ մետաֆիզիկական բզկտվել է, ու լինելու է այդպես, ամենատարբեր մեկնություններով: Մետաֆիզիկայի դասական ձևակերպումները դասական չեն, ինչքանով դրանք մետաֆիզիկա-փորձից առկա՞ծ ֆենոմենի [կամ եթե ընդունում ենք այն, որպես մաքուր հասկացություն որ փորձից առկա՞ծ չէ ] իդիոմատիկ թարգմանություններ են՝ անթարգմանելի թարգմանումներ:

\*Հումեական tabula-տախտակի փոխարեն նախընտրեցինք գործածել հունարեն table-ն՝ խաղասնդան, որ համընկնում է իդիոմատիկ միջանցքի գաղափարին, թեև tabula-ն նույնպես խաղի հետ կապված իմաստ ունի՝ տախտակ, որի վրա ճան էին գցում:

\*«Երկվացած» Միակի շարժը անմտահասու և անզգայահաս վերացարկումից մինչև իրական իրերի աշխարհ, իր փոխացման կատարյալ միասնությամբ, որ Պլոտինոսը [և պլատոնականները մինչև Պլոտինոսը] համոզված էր՝ ունի, հենց մեր անձնային, սովորական ես-ի երկատվածության մեջ են տեսնում, քանզի երևակայել անձ, որ տրոհվածություն չի ապրում, թեև ուզ բացարձակ Միասնականի պատկերացումներում, նույն է թե՛ բնության մեջ գտնել տարրեր, որ մասնատելի չեն: Կատարյալ միասնությունը՝ մասնատվածության միասնություն է, մի ծայրում՝ Նախագույնը, որպես Աստծո հետ ամբողջացման տրանսցենդենտ, մյուս ծայրում՝ մարդը, որպես «ցրվածություն», որ ամենից լավ ամբողջացնում է տրանսի մեջ Միասնականին ձուլվելու համար: Մատերիան, քանի որ երանության բացակայության մեջ է, «զրկված» է, «զրկվածությամբ» է [ ստերեոսիս ], այնուամենայնիվ, մենք պահպանում ենք նախախնամական արքետիպից «հոգու մաքրություն», ինչի չզիտակցում է մեզ դարձնում կենդանական բնագոյներով վատթարացած, որ մարմնավոր կազմության մեջ տկարացնում է հոգու «հուշը»՝ մեր ազգակցությունը Միակին: Միտո գաղափարը ծագում է հանուրի Մեկ լինելուց: Մենք մեկ են Միակի մեջ: Մեր ակունքը Աստծո միակության մեջ է: Նա, որ սիրուց դրոշված է մեզ պատժել չարիքի գոյությամբ այս աշխարհում, ինչպես հայրը, որպեսզի իր զավակին հեռու պահի հոռություններից ու նրան նախապատասխան դարձնի իր խստությամբ բարի բաների, պատժում է նրան, բայց պատժում է զավակի հանդեպ սիրուց: Սրա չզիտակցումը գալիս է մեր անձի երկվորությունից, որ որպես մակրո-տիեզերք հայելիացում է միկրո-տիեզերքի պատկերը:

*\*3. Այսընթացք միջնորդությամբ, եթե շողկապված տեսնենք Հնա-ն և Մատերիա-ն, չենք մտնանք չի համադրության մեջ: Ազնիվ չէ բաժանել իրարից Հնա-մայրակնությունը մատերիա-մայրակնությունից, հաշվի առնելով վերջինիս արմատը՝ mater և Հնայի աստվածների մայր լինելը:*

*\*4. Լավ է Բանականությունը հաշտվի Միակի հետ բոլոր հակասություններին հակառակ, քան Պլոտինոսը մնա ռեալության մեջ համաձայն հակասությունների օրենքի: Հակասության հակասման [որ ինքը՝ Բանականությունն է] այս խնդիրը [ աղերսված նաև չարիքի խնդրի հետ] կսկսի ինքն իրեն խժռել կիերկեզորից հետո: Բանականության վեհը աշխարհի հետ իր անհաշտության մեջ է, որովհետև աշխարհի հետ, եթե նա սկզբունքորեն առանց վեճի լիներ, հակասություններից այսքան չէր հղկվի ֆենոմենոլոգիական իր թռիչքներում, ինչպիսին այստեղ՝ «Էնենտադներում» է:*

*\*5. Այս «ծանրը», «հակասականը», «խրթինը» ոչ միայն նրա ուսումնառու-գրառդների «մեղքն» է: Պլոտինոսը «... իր գրառածը երբևէ չէր վերընթերցում, նույնիսկ մեկ անգամ որ աչքի անցկացրած լինի, կամ ընթերցի, չի եղել, և դա բացատրվում էր նաև իր վատ տեսողությամբ, որ թույլ չէր տալիս նրան գրածը կարդալ: Գրում էր անփույթ, ձեռագրի գեղեցկության վրա ուշադրություն չդարձնելով, պատշաճորեն չէր հետևում վանկատումներին, աչքաթող էր անում ուղղագրական կանոնները – միակ բանը, որ նրան լրջորեն զբաղեցնում էր՝ իմաստն էր: Մենք ապշած էինք, թե նա ինչպե՞ս այս բաներին հավատարիմ մնաց մինչև մահ» [«Պլոտինոսի կյանքը», 8, Պորփյորիոս]:*

*Շուպենհաուերը «անկազմակերպ կուտակվածք» որ անվանում է «Էնենտադները», նաև Պլոտինոսի «հակասություններից» է, հավանաբար, վրդովվել: Մետաֆիզիկան իրականություն է, որի իրական լինելը դեռ չլուծած, փիլիսոփայությանը ապրել են ուղարկում այնտեղ, իսկ իրենք [ Հեզելը նույնպես] չզիտես ինչ՞ ու, Պլոտինոսին հայտարարում են տաղտկալի:*

*Մանասե*

## Р е з ю м е

*В эссе рассматриваются проблема добра и зла в философии Платона [204 г. н. э. -270 г. н.э.], его теодические [богооправдание] взгляды, какие причины присутствия зла в мире, хотя по вопросу о происхождении зла никто не дает достаточно убедительного ответа. Также в эссе подчеркиваются некоторые метафизические формулировки, несомненно связаны с платоновской иерархией.*

## Ա մ փ ո փ ու մ

*Էսսեում արծարծված են Պլատոնոսի թեոդիստական [աստվածարդարացում] մոտեցմամբ հայագրները բարու և չարի հիմնախնդրի շուրջ, ի՞նչ նախադրյալներով է չարիքի գոյությունը աշխարհում, թե՛ն նրա ներկայությանը առնչվող պատասխանները բավականաչափ համոզիչ չեն՝ ովքեր էլ դրանք առաջադրել են: Միաժամանակ, էսսեում ընդգծված են մետաֆիզիկական որոշ ճակերպումներ, որ անշուշտ, կապված են պլատոնոսյան հիերարխիկ կառույցի հետ:*

## Summary

*The essay deals with the problem of good and evil in the philosophy Plato's theodicy approach [204 AD. e. -270 Of BC.], whether what causes the presence of evil in the world, although the questions connected with the origin of evil has one fairly convincing answer: whoever tries to answer it. Also, the essay highlights some metaphysical formulations undoubtedly connected with Plotinian hierarchy.*